# Արձանագրություն N 2

## ԵՐՋԷԿ-ՊԸԱՇՁԲ 11/16 ծածկագրով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի B2 ինսպեկցիայի շրջանակներում էլեկտրական սարքավորումների նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի

ք. Երևան 2 հունիսի 2016թ. ժ. 10:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Է. Սանամյանը |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ա. Չոբանյանը |
| | Ս. Ավագյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Պետրոսյանը |

Նիստի օրակարգը

1.ԵՐՋԷԿ-ՊԸԱՇՁԲ 11/16 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին:

2. Հրավեր ներկայացրած մասնակցի գրաված տեղի և մասնակցից համաձայն հրավերի պահանջվող փոստաթղթերի մասին:

3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի B2 ինսպեկցիայի շրջանակներում էլեկտրական սարքավորումների նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հարց 1.ԵՐՋԷԿ-ՊԸԱՇՁԲ 11/16 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին՝

1.1. Հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝

- «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ – (հասցեն՝ ք. Երևան, Արցախի 4-րդ նրբ, տ 6),

1.2. «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ն հայտը ներկայացրել է փակ ծրարի մեջ, ծրարի վրա, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, գրված է Պատվիրատուի անվանումը, հայտերի ներկայացման հասցեն, ընթացակարգի ծածկագիրը, «Չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, հայտը ներկայացնողի անվանումը, հասցեն, հեռախոսը:

1.3. «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված են հրավերով նախատեսված բոլոր հավելվածները, Տուժանքի մասին համաձայնությունը և վճարման պահանջագիրը, հրավերով պահանջվող լիցենզիայի պատճենը:

1.4. Համաձայն հրավերի ներկայացվել է հրավերի փաստաթղթերի մեկ բնօրինակ, մեկ պատճեն:

1.5. Հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի գնային առաջարկը հետևյալն է՝ 7 948 044 (յոթ միլիոն ինը հարյուր քառասունութ հազար քառասունչորս) ՀՀ դրամ, այդ թվում ԱԱՀ-ն:

Հարց 2. Հրավեր ներկայացրած հայտերի և մասնակիցների զբաղեցրած տեղերի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

2.1. Ներկայացված հայտի հիման վրա առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ Ը-ին:

2.2 Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

- Սույն նիստին հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՝ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցումը:
- Սույն նիստի հաջորդ օրը www.gnumner.am կայքում հրապարակել հայտի բացման նիստի արձանագրությունը:
- Ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցին՝ «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ին, ՀՀ կառավարության 2015 թ-ի հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշմանը կից հավելվածի (գնման գործընթացի կարգի) 47-րդ կետի 2-րդ ենթակետի համապատասխան երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հրավերով սահմանված թիվ 5 հավելվածը, կցելով նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) պայմանագրերի պատճենները, տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի (հանձման-ընդունման արձանագրությունների և այլն) պատճենները, կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Հարց 3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի B2 ինսպեկցիայի շրջանակներում էլեկտրական սարքավորումների նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

1.1. Սույն արձանագրության 2-րդ կետով պահանջվող փաստաթղթերը մասնակցից և ՀՀ ֆինանսների նախարարությունից հարցումն ստանալու օրվան հաջորդող օրը հանձնաժողովի անդամներին տրամադրել գնահատման թերթիկների երկուական օրինակ:

1.2. Հանձնաժողի անդամներից գնահատման թերթիկները ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում ամփոփել և հրավիրել գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Է. Սանամյան

Անդամներ՝ Ս. Ավագյան

Ա. Չոբանյան

Քարտուղար՝ Ա. Պետրոսյան